2.26.5 1594

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
Տ. ՍԻՄՈՆՅԱՆ

«01» 02 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0026-21

Ձեռնարկողը՝ ***«ԲԵՅՍԻՔ ԻՆՎԵՍԹՄԵՆԹ ԸՆԴ ԴԻՎԵԼՈՓՄԵՆԹ» ՍՊԸ***

Երևան, փ.Մայաթ Նովա , շենք 21 Ա

Գործունեությունը՝ ***Կ. Ուլնեցի փողոց 58/10 հասցեում թվով երկու բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***

ք.Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
թիվ ԲՓ
<01> 02 2021թ. 0026-21

Կ. Ուլնեցի փողոց 58/10 հասցեում թվով երկու բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝ «ԲԵՅՍԻՔ ԻՆՎԵՍԹՄԵՆԹ ԸՆԴ ԴԻՎԵԼՈՓՄԵՆԹ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝ «Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝ ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 7)-րդ կետի ա. ենթակետի՝ բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցումը որպես քաղաքաշինության բնագավառի գործունեություն դասակարգվում է «գ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Ներածական մաս Գործունեության նպատակն է Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան Կ. Ուլնեցի փողոցի 58/10 հասցեում գտնվող հողամասում կառուցել թվով երկու բազմաբնակարան բնակելի շենքեր: Նախագծային աշխատանքների համար հիմք է հանդիսացել Երևանի քաղաքապետարանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 28-ին տրված N01/18-07/2-5969-904 նախագծման թույլտվությունը, (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կառուցապատողի նախագծային առաջադրանքը, գործունեության տեղամասում իրականացված ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունները: Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, իսկ գործառնական նշանակությունը, կամ հողատեսքը՝ խառը կառուցապատման: Հողամասը սեփականության իրավունքով (վկայականի N 16062020-01-0256) պատկանում է կառուցապատող՝ «ԲԵՅՍԻՔ ԻՆՎԵՍԹՄԵՆԹ ԸՆԴ ԴԻՎԵԼՈՓՄԵՆԹ» ՍՊ ընկերությանը /այսուհետ՝ Ընկերություն/, զբաղեցնում է ընդհանուր 0.30364 հա մակերես:

Նկարագրական մաս Գործունեության ենթակա տարածքը գտնվում է Ուլնեցի-Ռուբինյանց մայրուղու երկայնքով, փողոցի անմիջապես հարևանությամբ: Գեոմորֆոլոգիական տեսակետից բնութագրվում է հյուսիսից-հարավ թեքությամբ, ծովի մակերևույթից բացարձակ նիշերի տարբերությունը կազմում է 1208. 0-1210. 0 մ: Տարածքում բացակայում են քանդման ենթակա շինությունները, տեղափոխման ենթակա ինժեներական ցանցերը, ազդեցության ենթակա ծառաթփային բուսականությունը: Տարածքը ներկայացված է խճային գրունտների ծածկույթով, բացակայում է բուսահողը: Գրունտային ջրերը գտնվում են 30 մ-ից խորը հորիզոններում: Ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են տեղամասում շինարարական աշխատանքների իրականացման համար:

Բնակելի շենքերը նախագծված են հողամասի աջ և ձախ կողմերում՝ 16 վերգետնյա և 2 ստորգետնյա հարկերով: Ստորգետնյա հարկերը նախագծված են որպես ավտոկայանատեղիներ, որոնցից յուրաքանչյուրը կծառայի 90 ավտոմեքենաների համար: Ստորգետնյա հարկերից մեքենաների ելքն ապահովելու համար

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER OF RA MINISTRY OF NATURAL RESOURCES
02543163
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

նախատեսվում է կառուցել 2 թեքուղիներ: Ստորգետնյա ավտոկայանատեղիի կառուցապատման մակերեսը կազմում է 1981.0 քմ: Ավտոկայանատեղիների օդափոխման համար նախատեսված են 5 ներածման, 5 արտածման և 2 ծխահեռացման համակարգեր: Շինությունների վերգետնյա կառուցապատման մակերեսը կազմում է 1209. 0 քմ: Շենքերի առաջին հարկերի ներքին տարածքը բաժանված է 4 հատվածների, որոնք կծառայեն որպես առևտրահասարակական տարածքներ, իսկ վերգետնյա՝ 2-16 հարկերը նախագծվում են որպես բնակելի հարկեր: Բնակարանների քանակը յուրաքանչյուր շենքում կազմում է 65, կամ ընդհանուր՝ 130 բնակարան: Շենքերում նախատեսված է փոքր վերելակ: Նախագծային լուծումներում, արտաքին մուտքերում հաշվի են առնված նաև սակավաշարժ խմբերի համար հարմարեցված թեքահարթակները:

Կոնստրուկտիվ լուծումների տեսանկյունից բնակելի շենքերը նախատեսվում են միաձույլ երկաթ/բետոնե շրջանակային հիմնակմախքի իրականացմամբ: Արտաքին պատերում նույնպես օգտագործվելու են ե/բ կոնստրուկտիվ լուծումներ: Բնակելի շենքի արտաքին պատերը նախատեսվում է իրականացնել մեկ շարք (200 մմ հաստ.) ամրանավորված պեմզաբլոկներով: Էներգոարդյունավետության և ջերմամեկուսացման տեխնիկական լուծումների նպատակով բոլոր պատերը արտաքինից ջերմամեկուսացվելու են (40 մմ հաստ.) փրփրապոլիստիրոլային ջերմամեկուսիչ սալերով և երեսպատվելու են (40 մմ հաստ.) բազալտե և տրավերտինե սալերով: Շենքերի տանիքը նախատեսվում է հարթ և կազմակերպված արտաքին ջրահեռացման լուծումներով:

Շենքերի ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացները կիրականացվեն համաձայն՝ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից տրամադրված ջրամատակարարման և ջրահեռացման տեխնիկական պայմաններին: Ջրամատակարարումը կիրականացվի Ուլնեցի-Ռուբինյանց մայրուղով անցնող՝ «Արզականի» d=200 մմ քաղաքային ջրատարից: Կոյուղաջրերի արտաքին ջրահեռացումը կիրականացվի Ուլնեցի-Ռուբինյանց մայրուղիով անցնող՝ d=500 մմ կոլեկտրին միացմամբ: Շենքերի կենտրոնացված տաք ջրամատակարարման համակարգ չի նախատեսվում, բնակիչների կողմից այն կկազմակերպվի լոկալ լուծումների իրականացմամբ: Բնակելի շենքերի գազամատակարարումը կիրականացվի «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրամադրվող տեխնիկական պայմանի համաձայն: Տարածքից մակերևութային ջրերը կհեռացվեն Ուլնեցի-Ռուբինյանց մայրուղիով անցնող՝ d=400 մմ հեղեղատարին միացմամբ:

Կառուցապատվող տարածքի բարեկարգման աշխատանքների շրջանակում շենքերի շուրջ կստեղծվեն 482.6 ք.մ մակերեսով սալվածքներ և մայթեր, իսկ տարածքում նախատեսված է ստեղծել 1344. 8 ք. մ մակերեսով կանաչ գոտի: Նորաստեղծ կանաչ գոտու ստեղծման համար անհրաժեշտ սևահողը (537. 92 խ. մ) կմատակարարվի լիցենզավորված մատակարարներից՝ ՀՀ-ում գործող օրենսդրական պահանջներին համապատասխան:

Կանաչապատ գոտու ոռոգումը կիրականացվի նախագծված ոռոգման ներքին ցանցի միջոցով՝ Փ=20-40մմ տրամագծով պոլիէթիլենային խողովակներով: Ոռոգման ջուրը կվերցրվի տարածքով անցնող ոռոգման ջրագծից:

Շինարարական հրապարակի կազմակերպման գործողությունները և լուծումները ներառված են հայտում և կիրականցվեն Շինարարության կազմակերպման նախագծի համաձայն: Կառուցապատման աշխատանքների տևողությունը հաշվարկվել է 28 ամիս, որից մեկ ամիս կկազմի հողային աշխատանքների տևողությունը: Հողային աշխատանքների ծավալները գնահատվել են՝ հեռացվող գրունտ/հանույթ՝ 23 742 խ. մ, հետլիցք՝ 6370 խ.մ, տեղափոխվող գրունտ՝ 17422 մ: Մնացորդային գրունտը

ՇՐՋԱԿԱՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից թույլատրված աղբավայր: Շինարարության փուլի համար անհրաժեշտ ջրի քանակը /որը նախատեսված է շինհրապարակի ջրցանման, որոշ շինաշխատանքների կազմակերպման, ինչպես նաև աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքների համար/ նախատեսվում է վերցնել հողամասին կից անցնող քաղաքային ջրագծից:

Շինհրապարակում առաջացող հոսքաջրերի (բետոնաջուր, որը կարող է առաջանալ բետոնախառնիչների լվացումից) հեռացման համար նախատեսված է կեղտաջրերի հեռացման տարա (≥10 խ.մ), որտեղ կհեռացվեն շինարարական կեղտաջրերը և մթնոլորտային տեղումների հոսքաջրերը: Տարայում հետերոգեն զանգվածի նստեցումից հետո ջուրը կօգտագործի ջրցանման նպատակով, իսկ նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Շինարարության ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները և ռիսկերը պայմանավորված կլինեն անօրգանական փոշու, ծխագազերի արտանետումներով, աղմուկի մակարդակի աճով, երթևեկության ծանրաբեռնվածությամբ: Վնասակար ազդեցությունները կկանխարգելվեն և/կամ կնվազեցվեն հայտում ներկայացված բնապահպանական միջոցառումների իրականացմամբ, մասնավորապես մթնոլորտային արտանետումների կրճատման նպատակով՝

- շինարար կապալառուն պարբերաբար կիրականացնի շինարարական հրապարակի ջրցանման և փոշենստեցման գործողություններ,
- շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ, սահմանափակ 30կմ/ժ-ը չգերազանցող արագությամբ,
- փոշի առաջացնող սորուն նյութերը (ավազ, խիճ և այլն) շինարարական հրապարակում կպահվեն պաստառներով ծածկված վիճակում,
- կիրականացվեն անվադողերը մաքրելու (ավազակոպճային մակերևույթների իրականացում) և լվացման միջոցառումներ,
- կառուցվող շենքերը արտաքինից և ներքինից կծածկվեն համապատասխան բարձրության անթափանց պաստառներով,
- աշխատանքների ընթացքում պատշաճ մակարդակով կվերահսկվի նաև մեքենա-սարքավորումների տեխնիկական վիճակը:

Շինարարական աշխատանքներում աղմուկի մակարդակի նվազեցման նպատակով օգտագործվող մեքենա-սարքավորումները կշահագործվեն աղմկակլանիչների և խլացուցիչների առկայության դեպքում և կանոնավոր կերպով կհսկվի վերջիններիս տեխնիկական վիճակը: Աղմուկ առաջացնող գործողությունների համար սահմանվել է ժամանակացույց՝ /ընդգրկելով՝ ժամը 14:00-ից 18:00-ը/ հնարավոր սոցիալական ազդեցություններից խուսափելու նպատակով:

Հայտում ներկայացվել են նաև տարբեր տեսակի թափոնների կառավարմանն ուղղված միջոցառումներ: Շինհրապարակում քսայուղերի և հեղուկ վառելիքի տարաները կպահվեն հատուկ անթափանց (ավազե, մետաղական կամ բետոնե) հիմքերի վրա, բացառելու նպատակով հնարավոր արտահոսքերը շրջակա արածքներ: Շինարարության ընթացքում առաջացող՝ 17422 խ.մ մնացորդային գրունտը և 280 խ.մ շինաղբը ժամանակավոր կուտակվելու է շինհրապարակում կազմակերպված կույտերի տեսքով՝ հատուկ հատկացված տեղերում, այնուհետև կանոնավոր կերպով տեղափոխվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից թույլատրված աղբավայր:

Շինարարության ընթացքում աշխատողների անվտանգության ապահովման համար, հնարավոր արտակարգ իրավիճակներից խուսափելու և ռիսկերը

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

նվազագույնին հասցնելու նպատակով նախատեսվել են միջոցառումների համալիր, որում ներառվել են նաև հակահրդեհային միջոցառումներ:

Կառուցապատվող տեղամասում կանաչապատման համար նախատեսվում է տեղանքի բնակլիմայական պայմաններին համապատասխանող ծառատեսակների տնկում, այդ թվում՝ եղևնիներ (6 հատ), սրատերև թխկիներ (15 հատ), սոճիներ (10 հատ), հացենիներ (5 հատ), դեկորատիվ ծառատեսակներից՝ գնդաձև թույաներ (177 հատ) և վարդեր (32 հատ): Կանաչապատ գոտիներում կիրականացվի նաև բազմամյա խոտաբույսերի ցանք: Ոռոգման ցանցի նախագիծը և կանաչապատման/դենդրո նախագիծը համաձայնեցվել է Երևանի քաղաքապետարանի հետ և ներկայացվել է հայտին կից փաստաթղթերում:

«Թվով երկու բազմաբնակարան բնակելի շենքերի» կառուցապատման ընթացքում նախատեսվող բոլոր միջոցառումները ներառվել են Հայտի բնապահպանական միջոցառումների ծրագրում: Բնապահպանական միջոցառումների գումարային արժեքը հաշվարկվել է 19037.63 հազ. ՀՀ դրամ, որի մեջ ներառված է շինարարության փուլում մնացորդային գրունտի հեռացման, կանաչապատման և այլ աշխատանքները:

Նորատունկ բուսականության խնամքը հետագայում կիրականացվի շենքերի սպասարկման աշխատանքների շրջանակում, ինչը կներառի նաև նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումները, որի ընթացքում կպչողականություն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:

Կառուցապատողի կողմից իրականացվելու է կանոնավոր մոնիտորինգ՝ բնապահպանական միջոցառումներ ծրագրում նախանշված մեղմացնող միջոցառումների արդյունավետ կատարումը վերահսկելու նպատակով: Հողային աշխատանքների իրականացման փուլում նախատեսված է անօրգանական փոշու չափումներ՝ 8 նմուշառումների քանակով:

Պատճառաբանական մաս. նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացված կարծիքները և դիտողությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում: Գործունեության վերաբերյալ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում իրականացված երկրորդ քննարկման ժամանակ բարձրացվեց հարց՝ կենցաղային աղբի տարաների տեղադրման տարածքների հետ կապված, ինչը հաշվի է առնվել հայտի լուծումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն տեղայնացված՝ ընդգրկելով հիմնականում նախատեսվող գործունեության տեղամասը: Դրանք շինարարության ընթացքում կարող են բացառվել կամ մեղմացվել հայտի բնապահպանական միջոցառումներ ծրագրում նախանշված մեղմացնող միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՈՉՆՉԱՑՄԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
РА ГОСУДАРСТВЕННОЕ УПРАВЛЕНИЕ ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ
ЗАО "ЭКСПЕРТНЫЙ ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ"
"ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER" CJSC
02543163
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքները կազմակերպելիս անհրաժեշտ է առաջնորդվել՝ ՀՀՇՆ I-3. 01. 01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերը հաստատելու մասի քաղաքաշինության նախարարի 2008 թ. հունվարի 14-ի թիվ 11-Ն հրամանով հաստատված նորմերով և պահանջներով:

2. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝

- պարսպապատել շինարարական հրապարակը,
- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

4. Տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված կանաչապատման/դենդրո նախագծի համաձայն, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:

5. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական միջոցառումներ ծրագրում և մոնիթորինգի պլանում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԲԵՅՍԻՔ ԻՆՎԵՍԹՄԵՆԹ ԸՆԴ ԴԻՎԵԼՈՓՄԵՆԹ» ՍՊԸ կողմից Կ. Ուլնեցի փողոց 58/10 հասցեում նախատեսվող «Թվով երկու բազմաբնակարան բնակելի շենքերի» կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ՝ Հ. Մկրտչյան